



ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲՈՒՆՏԻ ԳԻՐԻՔԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԺ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ի՞՞՞՞ մ սերբիի ժողովուրդ, ցանկացել ես իմանալ, թե ի՞նչ դիտք է բունել Հայ եկեղեցին, ի՞նչ ապրումներ է ունեցել նա և ի՞նչ է արել Հայրենական մեծ պատերազմի ընթացքում:

1941 թվի հունիսի 22-ին պատերազմի ահադանդը հնչեց և դերժանա-Ֆաշիստական հորդանքը ներխուժեցին մեր երկիրը: Այդ ծանր օրերին հալապաստյալ հայութան աչքը դարձավ դեպի ս. Էջմիածինը և սպասում էր նաև նրա ձայնին:

Պարզ է, որ ս. Էջմիածինը շէր կարող անդառնալ լինել Հայրենիքին սպառնացող այդ վտանգի հանդեպ: Ս. Էջմիածինը հրաշանդեց արտասահմանի և Միութենական ռեսպուբլիկաների բոլոր թեմերին մաղթանքներ կատարել, ջերմազին աղոթքներ վերատարել Բարձրյալին, Կարմիր Բանակի ղեկներն օրհնել և հաջողություն մաղթել:

Առաջին մաղթանքը մեծ հանրախափուրությամբ և բարձր ոգևորությամբ կատարվեց Ս. Էջմիածնում: Այդ թողների աշխրհում արտասուքի կաթիլներ՝ նրեկցան: Ջերմ և հուզիչ էր ժողովրդի սրտալի աղոթքը, սրով ուխտում էր նա ամեն դեմով Հայրենիքը պաշտպանել:

Այս մաղթանքը ապացուցեց մեկ, որ Հայրենիքի սերը խորն է հալապաստյալի սրտում և՛ նրա համար քրիստոնեական պարտականություն է այն:

Պատերազմի հաղթական ելքն ապահովելու համար Ս. Էջմիածինը հայրենասիրական կոչեր ուղարկեց ամենուրեք ժողովրդի սիրտը հայրենասիրական դրացունքով վառելու, Հայությունը իբրև մի մաղդ ոտքի

հանելու, իր դուշմն ու կալքը, իր մտփոր ու Ֆիդիկական աշխատանքը, իր կյանքը արամադրելու Հայրենիքի պաշտպանության, թշնամուն իր երկրից վտարելու՝ և նրան վախճանապես ջախջախելու սուրբ դործին, թշնամու, որ ամբողջ մարդկություն թշվառություն, շեն երկրների ալիքածություն, նրանց կուլաուրակայն ստեղծագործության ոչնչացման պատճառն է հանդիսացել և մարդկությունը ստրկացնելու ձգտումն ու նպատակ է ունեցել:

Ս. Էջմիածնի ձայնը լսեց Հայ հուզվորականությունը և իր հոտին ուղղած հայրենասիրական հուզիչ ջարդներով ոգեխորեց Հայ հալապաստյալներին Հայրենիքի պաշտպանության վեհ գաղափարով:

Հայոց պատմությունը հարուստ է Հայ դրամպարների սխրագործություններով, որոնք Հայրենիքի թշվառ օրերին նրա փտորն են կուել-կուխել: Նրանք Հայ ժողովրդի անպարտելի հերոսներն են դարձել և իրենց անվան շուրջը համախառնով Հայ ժողովուրդը կուխել են թշնամու դեմ հանուն ապստամբյան և անկախության, դերադասելով մեռնել, ջան ստուգել ապրել: Նրանք կուխել են Հայ ժողովրդի պատիվը փրկելու և Ս. Հայրենիքը պաշտպանելու համար:

Պատմական հայի նույն հերոս ոգին ապրում է նաև այսօր ներկա հայի մեջ: Հայ ժողովուրդն այսօր էլ արիությունը, հաստատակամությունը և մեծ ոգևորությունը կուխում է նենդ թշնամու դեմ աստիճանով պատերազմի ամեն մի ծանրություն և՛ ճակատում, և՛ թիկունքում: Նա ամեն

գնով պաշտպանում է իր Հայրենիքը, իր
ժողովրդի պատիվը, իր անցյալ կուլտու-
րական ստեղծագործութիւնները և ներկա
նվաճումները: Նա կոչում է ապափինած
Աստուծո ողորմութեան և իր գործի
արդարութեան, ուստի և Հալաստում է պա-
տերազմի կատարյալ Հաղթութեան:

Այդ Հալաստը առանկէ ևս իրական է
Համարում գիտեալով, որ քաջարի Կար-
միր Բանակը ղեկավարում է ԻՄՍԻՃ
ՎԻՍՍԱՐԻՆՈՎՈՎԻՉ ՍՍԱԼԻՆԸ, Ժողովրդի
սրբելի Առաջնորդը և Կարմիր Բանակի Հան-
ճարեղ Գերագույն Հրամանատարը, որի
Հանճարով կազմակերպիչը ու կազմակերպ-
վում են մեր բոլոր փառանքոր Հարթանակ-
ները:

Հայ Եկեղեցին՝ Ս. Էջմիածինը նույն
Հալաստով և ողևորութեամբ Հորդորական
ուղեբններ ուղարկեց ամենուրեք, որ Հայ
Հալաստացյալ կար, Նյութականապետ ևս ա-
ջակցելու Կարմիր Բանակին: Ս. Էջմիածինը
ինքն առաջին օրինակը տված իր Համեստ
լուծալով: Նրա օրինակը վարակիչ Եղանկ
Հայ Հալաստացյալները Համար: Հայ Համար
տացյալներն ընդունեցին Ս. Էջմիածինի Հրա-
միրը և ամեն կողմից առատ նվերներ ու-
ղարկեցին Ս. Էջմիածին՝ նպաստելու պա-
տերազմի Հաղթութեան:

Հայ Հալաստացյալների նվերներով կա-
ռուցվեցին տանկային շարասյուներ, որոնք
Հայ Եկեղեցու ցանկութեամբ կոչվեցին
«Մասունցի Դամիթ»՝ Հայ պատմական է-
պոսի Հերոսի անվամբ, որ աներկուղու-
թեան, բարութեան և Հաստատանկամութեան
մարմնացումն է:

Աս ամօրիմ պատիմ ունեցանք ստանա-
լու Ի. Վ. ՍՍԱԼԻՆԻ ողջույնն ու շտրհա-
կարական Հեռագիրը իր և Կարմիր Բանակի
կողմից արտասահմանի և Միութենական
Կերտի Հողեարականութեանը և Հալաստա-
յալ Հայութեան:

Հասում Հայ Հալաստացյալների և եկե-
ղեցու քաղաքներ Բամբ, Երբ Կատարիկեց
տանկերի Համաձուլմը գործող բանակին:
Օրհնեցին Մեր մեր տանկային շարասյու-

ները մաղթելով, որ նրանք թշնամու Զախ-
ջարման զորավոր Հենարաններ Հանդիսա-
նան: Տանկերի կառուցման, պատերազմի
վայրն ուղարկելուն և նրանց կազմի կա-
տարած քաջագործութիւնների մասին
ստացված են տեղեկութիւններ Համապա-
տասխան գինիորական իշխանութիւններից,
որոնց շտրհակարանկան և ողևորութեամբ
լի Հեռագրերը տպված են շեջմիածինն ամ-
սազրի առաջին երեք Համարներում:

Հայ Ժողովուրդը ոչ միայն գինական
արտեղցութեան է ցույց տվել Հայրենական
մեծ պատերազմին, այլև թիկունքում տա-
րել է կարևոր աշխատանքներ: Թիկունքում
Հայ կինը, Հայ ծերունին և Հայ պատանին
իրենարինել են երիտասարդ մարտիկներին
և՛ դաշտի աշխատանքներում, և՛ գործա-
քաններում, և՛ տանը: Թիկունքում Հայ
մարդը Հոգացողութեան է ունեցել նաև
մարտիկների ընտանիքների վերաբերմամբ՝
ինամեղով նրանց կանանց ու երեխաներին,
մատակարարել է դեղորայք վիրավորնե-
րին, նվերներ է ուղարկել մարտիկներին,
որպես նշանակ իր տածած սիրտ: Այս բո-
լորն արել է, որպեսզի մարտիկներն ազատ
լինելով ընտանեկան Հոգսերից լազաղ Հո-
ղով ամբողջովին նվիրվեն պատերազմին:

Մենք, որպես Հովիտպետ Հայ Եկեղե-
ցու, զգացված ենք Հայ Ժողովրդի անմ-
նկեր Հայրենասիրութեամբ, բայց առաջել
ևս զգացված ենք տեսնելով Միութենական
Իսկուզողների շարքում Հայ Ժողովրդի
վարած Հերոսական պայքարը Բանուն և
Հայրենիքի ազատութեան և ընդդեմ բնու-
թեան ու ստրկացման: Բերկարյի Բ լսել,
որ օր ամուր անում է Հայ Հերոսների թի-
վը, որոնք Հարստացում են և վեմացնում
մեր Հնադարյան պատմութիւնը ու բարձր
պահում Հայ Ժողովրդի անունն ու պատի-
վը:

Վրդովեցուցի է տեսնել երկրի ամե-
րածութեանը, կուլտուրական ձեռնարկնե-
րի ոչնչացումը, շն քաղաքների ամալա-
ցումը, Ժողովրդի բռնի և ապօրինի գերե-
վարութեանը: Մանր է և՛ հուզիչ մարդկա-

յին կուտորածը, կենդանի էակներին ժահացումը, որ կատարել են Փարխատական հոր դաները օկիւպացման ենթարկված լաւոր վայրերում: Սակայն դերմանական բարբաբոսների վարքադուքությունները չընկճեցին Մեծ Միութեան հերոս ժողովուրդներին աննկուն կամքը:

Եվ այսօր համայն աշխարհի դարմանքի առարկա է այն ուղին, որով մեր երկրի բազմաշեղու բնակչութիւնը անբախտելի միութեամբ կապված ոտքի է կանգնել դերմանական Փաշլոյմի դեմ իր Հայրենիքը պաշտպանելու համար:

Այս ամենը հետևանք է Մովսեսական իշխանութեան վարած որդաբնի իմաստուն բարդաբանութեան:

Մեր պետութիւնը խրախուսում է յուրաքանչյուր ժողովուրդի կուլտուրական զարգացումը, որի հետևանքով ամենախոշոր ժողովուրդն անգամ ազատ է իր կյանքը կազմակերպելու և զարգացնելու իր աղքատիքն ավանդութիւնների և սովորույթների համեմատ: Մեր պետութիւնը տնտեսապես էլ օժանդակում է յուրաքանչյուր ժողովուրդի կուլտուրական զարգացման դործին: Նա միաժամանակ եղբայրական ամուր կապ է հաստատել մեր Միութեան բազմաշեղու ժողովուրդների միջև, որոնց միահամուռ ջանքերով անարդ թշնամին վտարվեց մեր երկրի սահմաններից, ջախջախվեց նրա կենդանի ույժն ու գինական տեխնիկան և պատերազմական գործողութիւնները փոխազդեցին Գերմանիայի հողը:

Հայ ժողովուրդը դեռ մեծ աննկեքներ ունի. նա միացած Միութեան ժողովուրդների հետ պիտի իր ուժերը լարել ինչպէս Հայրենիքի ազատութեան և թշնա-

մու վախճանական ջարխախման, նույնպէս և ընդհանուր Հայրենիքի տնտեսական հզորացման, վերաշինութեան և վերակառուցման մեծ դործին: Պատերազմը անասելի վնասներ սպալ Միութեանական բոլոր ուսպուրիկաներին: Սակայն այսօր միտքաբար մենք Մենք, որ մեր ժողովուրդներին պատմութեան մեջ չտեսնված անձնագրահութեան շնորհիվ շուտով աշխարհում խաղաղութիւն պիտի վերահաստատվի և մեր հզոր դաշնակիցներին՝ Մեծ Բրիտանիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների ջերմ մասնակցութեամբ համայն աշխարհի արդար ու անվտանգ վերակառուցման ականատես պիտի լինենք:

Օրհնում ենք Միութեանական Իեսպուր-իկաների բոլոր ժողովուրդներին հայրենական պատերազմով իրենց ցույց տված հաջրենասիրական գործունեութեան համար:

Օրհնում ենք հերոս Պարմիր Բանաղը և նրա իմաստուն Առաջորդին՝ Մեծ Մարշալ Ի. Վ. ՍՏԱՒԻՆԻՆ, որի Հանճարեղ դեկալաբութեան շնորհիվ ջարխախմեցաւ դերմանական Փաշլոյմի գինական ույժը:

Սոնարհում ենք Հայրենիքի համար նահատակված մարտիկների շիրիմների առաջ և աղոթում Բարձրասլին նրանց արժանացնել փառաց պսակի:

Օրհնում ենք նաև մեր հայ ժողովուրդը Հայրենական պատերազմով իր ցուցարելած հալատարութեան և անձնագրահ գործունեութեան համար: Կար և ույժ ենք մաղթում նրան, որ մեր երկրի ապագա վերաշինութեան շրջանում ի վիճակի լինի նույն անձնվիրութեամբ հանդես գալու հօդուտ ընդհանուր Հայրենիքի և Մովսեսական Հայաստանի մտավոր, բարոյական և արտտեսական գորացման:

ԱՅԳՂՆՑԻՐ ՅԾՂԱԿԱԼ ԵՄԾԱՅՈՆ ԿԱՅՈՑ ԿՅՐԱՊՅՈՑՈՒԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԵՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԾՈՐԵԳՅԱՆ

